



Հայաստանեայց Եկեղեցի Կիսմայրի Ամերիկայի (Արեւմտեան Թեոս)

Western Diocese of the Armenian Church of North America

Archbishop Vatché Hovsepian, Primate

Temporary Headquarters

2215 E. Colorado Blvd.

Pasadena, CA 91107

Tel: (818) 683-1197

Fax: (818) 683-1199

PRESS RELEASE

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՎԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՑՈՎՍԷՓԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Այսու գոմումակութեամբ կը հաղորդենք Թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Յորդ Պատգամաւորական Ժողովը գումարուեցաւ Մայիս 3-ին եւ 4-ին, 1996, Սան Ֆրանսիսկոյի Ս. Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Վաշէ Արք. Ցովսէփեանի:

Պատգամաւորական Ժողովի Դիւանի անդամներն էին Քրիս Եալտըզեան՝ Ատենապետ, Հէրի Գալուստեան՝ Փոխ Ատենապետ, Հայերէնի Ատենադպիր՝ Արթ. Տ. Սիփան Քհն. Մխսեան եւ Անգլերէնի Ատենադպիր՝ Բարեշնորթ Սթիվըն Սրկ. Ատամզ:

Ժողովի գլխաւոր օրակարգն էր Արեւմտեան Թեմի Առաջնորդի ընտրութիւնը: Այս պաշտօնին համար երեք թեկնածուներն էին Ռեաեւալ քարճրաստիճան հոգեւորականները. Գերշ. Տ. Վաշէ Արք. Ցովսէփեան, Թեմիս անցնող 25 տարիներու Առաջնորդը, Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեան՝ Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդը եւ Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեան՝ Սան Ֆրանսիսկոյի Ս. Յովհաննէս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը:

Առաջնորդարանիս Դիւանը այսու ուրախութեամբ կը հաղորդէ համայն հաւատացեալներուն, թէ Գերշ. Տ. Վաշէ Արք. Ցովսէփեան, որ անցնող 25 տարիներու ընթացքին առաջնորդական քեղուն գործունէութիւն ունեցաւ, Պատգամաւորական Ժողովի կողմէ քուէներու մեծամասնութեամբ, Արեւմտեան Թեմի Առաջնորդ վերընտրուեցաւ յառաջիկայ եօթը տարիներու նոր շրջանի մը համար:

Թեմիս վերընտրեալ Առաջնորդ Սրբազան Հօր կը մաղթենք առողջութիւն, արեւշատութիւն եւ Աստուծոյ Օրհնութիւնները, մինչ ան կը վերսկսի որպէս Առաջնորդ իր նոր շրջանին՝ օրէ օր ծաւալող Արեւմտեան Թեմին նկրտ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Փաստութեան, Մայիս 6, 1996